


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
**Ն. ՓՈՐՈՍԵԱՆ**  
 ՆԱՄԱԿ ԿԱՍՒ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ  
 ՊԵՏԻ Ե ՈՒՂՂԵԼ ԱՌ  
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ  
 ԳԱԶԻՐԷ (Հասպպակի)

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



**ԼՐԱԳՐ**

**ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

**ՔԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ »	12

ՔԱՃԱՆՈՐԴԱԳՐՆԸ ԿԱՆԽԻԿ Ե  
 ԵՒ ԹՂՔԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ  
 Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած  
 գրութիւնք եւ չ'են սրուի:

**ՈՐԲԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՄԱԿԻ ՏԱԿ**

Ա՛յն վայրկեաններուն, յորում հայկական բոլոր նահանգներուն մէջ՝ ողբերու և հեծեծանաց մատնուած տասնեակ հազարներով խեղճ ու անպաշտպան որբերուն կարեկցութեան արժանի վիճակին դարման մը գտնելու միջոցներ կ'որոնէ ամեն գրիչ, — կարող թէ սկար. — ա՛յն վայրկեաններուն, յորում միջազգային Մամուլը իրեն սիւնակներուն մէջ շատ ընդարձակ և սրբտաշարժ էջեր կը նուիրէ հայ որբուկներուն ի նպատ. ա՛յն վայրկեաններուն, յորում ամէն զգայուն բերաններէ թռած իւրաքանչիւր բառ, անհամար հայ որբոց վիշտն ու տառապանքը կը հոչակէ և գթութեան ակնարկներ անոնց կողմ ուղղուելու խրախոյս կը կարգայ ալ և ահեակ. ա՛յն վայրկեաններուն, յորում աշխարհակալութեան մորմարէն բռնուած թագապարզ գլուխներն իսկ, վայրիկ մը իրենց շքեղ ու փառապանծ գահոյից վրայէն — ուր ամեն ինչ մոռացումի թանձր ստուերին տակ ամփոփուելու գատապարտուած կ'ըլլայ — կը խոնարհին զբաղիլ և գոնէ հայ որբերու աղբխարշ կացութեան մասին երեսպաշտ կարեկցութիւն մը ցոյց տալու ճիգեր չեն խնայեր. ա՛յն վայրկեաններուն, յորում ի սփիւռս աշխարհի կը սուրայ հայ որբոց գառնակակիծ աղաղակներուն արձագանգը, ասդին Գահիրէի մէկ խորշին մէջ՝ որբեր խնամելու ձեռնարկը կիրքերու, միմիայն ս'և կիրքերու, սեով անած գիւտանլ հոգիներու գատապարտելի էկրիկներուն զոհելի ուղուի Մե՛ծ ամօթ:

Որչափ տխրագրեցիկ ըլլայ միջազգայն, նոյնչափ սակայն ճշգրիտ և ցաւալի իրողութեանմը հանդէպ կը դանուինք գժբազդաբար, երբ մեր աչքին առջև կ'ունենանք այն ազգարարութիւնը, որ «Արշալոյս»ի նախորդ թուով երեաց, Որբախնամին տուժածայ Գործադիր Ժողովոյն կողմէ. և մենք արդէն հեռիէն հեռի լուսութեան մէջ նշմարած էինք ըստաճները հաստատող բոլոր այն շարժումները, որ Որբախնամին շուրջ սեղի կ'ունենային ի վնաս և ի քայքայումն յիշեալ ընկերութեան:

«Արշալոյս»ի փոքրիկ էջերը թոյլ չեն տար մեզ ընկերութեան կազմակերպութեամբ և ուրիշ շատ մը մանրամասնու-

թիւններովը զբաղիլ. միայն բաւական պիտի համարինք ըսել թէ՛ շատ անձուկ և սակաւթիւ անդամներու շրջանակի մը մէջ կը կատարուի ժողովականներու ընտրութիւնը և ընդհանուր Դիւանը կը կազմուի, որուն առաջին գործը պիտի ըլլար կանոնագիրը իր նախնական վիճակէն բարեփոխել և բոլոր անդամոց հաւանութեանը ենթարկել:

Ընդհ. Դիւանը իր առաջին քայլերէն իսկ մոռնալով կամ զանց ընելով ընկերական ամենէն տարրական պարտականութիւններն, ըստ իր բարի սովորութեան մանուածապատ ուղիներու մէջ կը գնէ իր քայլերն:

Ուղղամտութիւնը իր բացակայութեամբ բը կը փայլի. այնպէս որ ողջամիտ անդամոց ջիղերը զբոգուելով մինչև իսկ ի գործ դրուած ապօրինութեանց և զանցառութեանց դէմ բողոքելու կ'ստիպուին, որով Դիւանին Ատենապետը՝ չ'կրնալով ինքզինքը արդարացնելու բառ մը գտնել, կը հրաժարի և միեւնոյն ժամանակ կը ջանայ հրաժարեցնել ուրիշներ ալ, որպէս զի ընկերութեան գոյութիւնը խախտել կարենայ Դեռ հոգ ալ կանգ չ'առնել Ատենապետի շահաւէտութիւններն. նա իրմէն աւելի միամիտներն կը համոզէ և վճարումները դադարեցնել կուտայ. եթէ երբէք արդէն բան մը վճարած էին և ստորագրուած գումարներուն քանակը, Գարակէօզեան կըստականերուն շրջուցիչ՝ բայց գատարկ պարունակութիւնը չ'ունէր:

Հոս ալ չենք կրնար վերջակէտը գնել տարաբաղդաբար Պ. Ատենապետի տգեղ խաղերուն. նա մի վերջին միջոց ալ ունէր. Ատենապետը՝ որ իրեն հլու և հնազանդօգնականն է, կը թելադրէ զայն Ընդհանուր Ժողովոյ գումարումը ձգձգել, որպէս զի անդամները յուսահատած քաշուին և ընկերութիւնը քայքայի ու սրբերը զրկուին ընկերութեան առսլ բերելիք նպատէն: Ինչս'և այս ամենը, — որովհետև իրեն մըտադրած ապօրինութիւնները գործադրելու յաջողած չէր և անկեղծ ու ազնիւ քննադատներու դէմ դանուած էր:

Ահաւասիկ փոքրօրի նկարագրով օժտուած ինքնագով ազգասէր մը, որ յաճախ մութ ու մալար և սրբապաշտ ճամբաներէ քալելու միայն վարժուած է իր ասպարէզին մէջ. և մինչև ցարդ նմանօրինակ բազմաթիւ շահաւէտութիւններու ատեն և գիպտական Մալեշով քաջակերուած է. բայց որբերուն

աղաղակը երկինքն ու գետինը կը դղրդեն և այս անգամ ա՛լ ժամանակը հասած էր: Մալեշով լայնարձակ վարագոյրը վերուստ ի վայր կը փեռելու և անոր ետեւ ծածկուած կեղծիքի մարմնացումը մեզ կը ներկայանայ խողտուն աչերով՝ արեգական լուսաշող ճառագայթներուն մէջ:

Բազմաթիւ են մեր ընկերականութեան մէջ սպրդած վնասակար տարրերն, որոնք եթէ իրպառ չ'զտուին ու չ'մաքրուին մեր մէջէն, և եթէ չբխանանք դատիկ զանոնք իրենց գործերէն, մեր հանրային պարծոց մէջ ստէպ պիտի պատահին նմանօրինակ շատ մը դէպքեր, որոնց հետեանք պիտի ըլլայ հանրութեան իրապէս օգտակար դառնալու բարեսիրական և ազնիւ ոգիին նուազումը և մենք նոյնչափ անգամներ պարտաւորեալ պիտի լինինք, որքանախրակաւ և այլ բարեւիրակաւ ու է անուններու տակ ծածկուած գոհ հիկ գործիչներուն դիմակը պատուելու **ԵՂԻՇԷ**

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ**

**ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆ**

Ոսկան-Նազարի Յիւստակիւն

Ընե՛ք մենք ալ, բարեկամ, քեզ համար բանասեղծին հետ. «Վարդ էր, ապրեցաւ վարդերու նման՝ առտու մը միայն. . .»

Ձէ՛. ատիկա մեզի չկրնար մխիթարել, եւ արցունքները կը կաթկթին դագաղի վրայ աղի՛ աղի՛. տա՛ք տա՛ք:

Քեզ սիրող ընկերներդ պինդ կը գրկեն քեզ, կրակէ համրոյրներ կը հրդեհեն ճակատդ, այտերդ, աչքերդ, շրթունքներդ. ոչինչ . . . դուն դագաղի մէջ կը պառկի՛ս անզգայ . . . :

Դագաղդ ձերմակ էր, ձերմակ ծաղիկներ Թափեր էին դագաղիդ վրայ. մտածումներուդ պէս ցիրուցան, դագաղումներուդ պէս անբիծ, հոգիիդ պէս անուշաբոյր . . . :

Տխու՛ր հեղուկութիւն քաղաքակրթութեան . . . Մաղիկը՝ երջանիկ ու նորածիլ կեանքի այդ զուարթ խորհրդանշանը, մահուան՝ այսինքն փնացած, վերջացած կեանքի մօտ . . . : Մաղիկներ՝ որ նորապսակ հարսին ճակատը կը պնեն, խընձոյթի, ուրախութեան օրերու սեղանները կը զարգարին. դարձեալ ծաղիկներ՝ որ մահը կը գրկեն . . . :

Դէս դէն, ցանցառ մոմերու դժգոյն ցոլքերը կը մարին դագաղիդ ձերմակին վրայ. խապոտ ձայներ մահուան ցուրտ երգը կ'երգեն և թախի՛ն ու կըսկիծը հոգիս կը խանձի՛ն . . . և ոսկորուսումն մինչև ծոծը կը գողա՛մ . . . :

Կը նայիմ գազաղիլ ու կ'ըսեմ. «Ի՞նչ եղար, Ոսկան, անհուն հողի մը ունեկիր, հրաբուխ սիրտ մը կ'այրուէր կուրծքիդ տակ. ի՞նչ եղաւ ան . . . ուրեմն ոչինչ . . . ոչինչ . . . ոչինչ . . .»

Գազաղիլ խուփը բացին. տեսայ թեպի . . . «Որքան գեղեցկացուցեր էր թեպի մանր» տեսայ անհունութեան պէս խորունկ նայուածքը. կրած դերմարդկային տառապանքները այնքան կենդանի, այնքան վշտապին արտայայտող վերջին սեւ նայուածքը, որ մտաւ հոգւոյս մէջ ու կը մնայ . . . Նա կը հետեւի մտածումներու, խորհուրդներու, վշտերու, ուրբաութիւններու. նա կը հետեւի ինծի ամէն տեղ ուր որ երթամ. ամեն տեղ, ուր որ կենամ . . .

Տեսած էք խալին վրայ Մեծ Մարդասէրին դէպ ի երկինք վերցուցած չարչարուողի ցաւողին բայց վսեմ նայուածքը ուր արցունքը կը լսանայ . . . սեսաք ուրեմն Ոսկանը իւր գազաղին մէջ . . .

Բարեկամ, աչքերդ բաց քաջաբար մահուան գալուստը դիտեցիր. ուզելով ցոյց տալ կարծես թէ չես վախնար իրմէն . . .

Ա՛հ . . . մենք այդ գիտէինք, բայց մանր չէր դիտեր . . . որքան սքանչացաւ արդեօք վրաք . . . Ինչպէս քաջ կեցար միշտ կեանքի ամենադաւան եւ ամենատխուր պարագաներուն մէջ, այնպէս ալ քաջ մտաշիր մահուան դէմ . . .

Հետաքրքիր խուզարկու աչքերդ խոշոր բացած ուղեցիր տեսնել թէ ի՞նչ կայ մահէն անդին. երբ նա քեզ մօտ իր անաւոր գաղտնիքներէն կը մերկանար . . .

Ամէն բանէ առաջ, մենք դիտենք, քու պաշտած հայրութեան անորոշ բաղդը, մութ ապագան ուղեցիր որոջ տեսնել, երբ մանր կը պատուէր վերջապէս անձանթիւն քողը քու բաց աչքերուդ առջև . . .

Ի՞նչ տեսար արդեօք, բարեկամ, շուտով պիտի ծայր ազատութեան արշալոյսը մեզի համար . . . Չարչարուողի այն վսեմ ու աղւոր նայուածքիդ մինչեւ խորքը ընկղմեցի իմ աչքերս ալ. բայց ամառ . . . չկրցի թափանձել գաղտնիքին . . .

Սուրբ նպատակի՞ զո՞՞ն . . . ազնիւ հողի որ ազնիւ ապրեցար, մաքուր սիրտ որ մաքուր մնացիր. քու անձը ի սպաս մտցած, քայլ առ քայլ հետեւեցար թշուառ հայ ժողովրդի բազմին, անոր խնդր թիւններովը խնդացիր, անոր տառապանքներովը առաւապեցար, անոր արցունքներովը լսացիր . . . Մէկ ձեռքդ սուր՝ սասանցի՛ր, զողացուցի՛ր. պատմեցի՛ր. միւս ձեռքդ գրիչ՝ ձողկեցիր, հարաւանցիցիր ու վարձարեցի՛ր . . . Ատեցիր մահուա շատ, բայց սիրեցիր նաեւ հողով շափ . . .

Ձրկանքները չ'սկարացուցին ամուր հողիդ տանջումքները չ'թուլացուցին երկաթէ կամքդ. գուն չ'կնկար բնաւ. մարդիկ չ'կրցին քեզ ձգել, միայն մանր տապալեց քեզ. հսկայ կաղնի . . .

Եւ մենք, քեզ հասկցող ու քու վրաք հիացող բարեկամներդ գազաղիլ մօտ տեսանք անհուն զոհաբերութեան ու դերմարդկային չարչարանքի լուսապատկը՝ որ ճակտիդ շուրջը կը շողար եւ մեր աչքերը շագան . . .

Նպատակիդ չ'հասած մնար. աչքերդ բաց, անթաքթ նայելով հետուն՝ ուր պաշտեցեալ հայրենիք մը կը միայն . . . հետուն՝ ուր տանջուած մայրը արեւն կուլայ, կ'այրի կը մրկի քու կարօտով . . .

Բայց ի՞նչ միայթ . . . գուն չէի՛ր այն հողիներէն՝ որ տանջանքէ կայր ու պինդ մտապի իրենց ինկած վայելիքի բաժինը . . .

Գուն քեզի համար ընտրեց էլի միայն տանջանքը. անուշը ուրիշներուն՝ իսկ լեզուն՝ քեզի, եւ այդ տանջանքներու դիմով, ամբողջ ժողովրդի մը, ապագայի մէջ — քայլ հետադարձ — ճաշակելիք անհուն վայելքը երեւակայեցով միայն կը ջանիկ էիր արդէն, եւ այդ կը բաւէր քու մեծ հոգւոյդ . . .

Նրխտասարդ՝ գեւ գարնան վարդը ճակտիդ՝

թառամեցար շուտով. ոսկայն դուն շա՛տ ապրեցար, բարեկամ . . .

Եւ որ իրեն համար միայն կ'այլ ի, միշտ քիչ կ'այրի, նոյն իսկ որ գարնով կեանք ունենայ. իսկ դուն այդ քանի մը տարուայ կեանքիդ մէջ միթէ վայրկեան մը քեզի համար ապրեցար . . .

Ճերմակ գազաղիլ մօտ, այս մտածումները ունեցայ. ուղեցի եւ ալ ձերմակ ծաղիկներ թափութիկ վրաք. բայց «մաղիկը պող եւ անգայ է» եւ քու վրաք կը թափեմ հոգւոյս եւ սրտիս խորքէն բողած այս հառաչանքներն ու արցունքները. օ՛հ թէ գայի՛ր ասոնց տաքութիւնը գերեզմանիդ խորէն . . .

Աղէքսանդրիա ՄԱՌԻ

### Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Ազգ. վարչութիւնը վաղը կ'երակի 10 Դեկտ. հանդերձեալ է կատարել Պատ. Երեսփոխանական Ժողովոյ պահանջաւ չորս անդամներուն տեղ նոր ընտրութիւններ:

64 ընտրողական իրաւունք!!! վայելող պատուաւոր (ընտկանորտ որ այդ ցանկէն դուրս մնացողներն անմայսի եւն առաջնորդարանի յայտարարութեան նայելով) անձանց զրկուած նամակներէն մէկ հատ այս վայրկեանի մեր ձեռքին տակ ունինք, որ խորհրդածութեան առատ նիւթ կը մատակարարէ մեզ. թէ ինչպէս . . .

Հայոց Ազգ. առաջնորդարանը իր ընտրողներու պատկառելի 64 թուովը երբ մեզի կը ներկայանայ, բացարձակ իրաւունք կ'ունենանք ըսելու թէ՛ ամիս ու կէսէ աւելի երկար բարակ խորհրդածութիւններ ընելու, սրտումներ տալու, նամակներ ու յայտարարութիւններ ցրուելու, պէտք չկար, քանի որ արդէն ինք իր մէջ պիտի կատարէր այդ ընտրութիւնը, Լ'ուր է կատարել մար թէ վարչութեան ըսողը քրտններն լով ձեռակառնութիւնը տեղը բերէ՛ր. եւ որ մ'ալ դաքն իբր օրինական գրասա եղած գրտողութիւնները հերքելու պիտի գործածէ:

64 ընտրողներէն արդէն 13, ազգային առաջնորդարանի եւ վարժարանի պաշտօն ունեցողներ են. կը մնայ 46ը, որոց 17ն ալ դարձեալ առաջնորդարանի միապետական ոգւոյն հանրածանթի գործիքներն են. կը մնայ 29. Երանի՛ր այդ 29 պատուական անձանքուն, որ Գահիրէի տեղող Հայութիւնը պիտի ներկայանեն. Բայց խնդիր է գիտնալ թէ մնացեալները իրենց ազգային իրաւունքները թող կուտան որ միմիայն 23 զրուշի վճարումով մը 29 հոգիներ վայելին:

Ատրիկայ միշտ անկարելիութեան մասնուած տեսնել կը կարծենք, եթէ նոյն իսկ ազգային առաջնորդարանը զօրանցի եւ հոգեւունքն ալ չլիթաներ պատրաստող դարձնցի վերածուի:

Ազգ. առաջնորդարանի ուղղուած հետեւեալ բողբաղքի պատճէնքը այսօր մեզ զրկուած է պատուաւոր եւ երկար տնտեսներ առգային կարեւոր պաշտօններու մէջ գրտուած անձէ մը, որ ի գիտութիւն մեր ընթեցողաց նոյնութեամբ կը հրատարակենք ի ստորեւ:

Արժանապատիւ Հայր Առաջ. Փոխ-Տեղապար եւ Նախագահ Ընտրողական Ժողովոյ Գաւառ. Ազգ. Ընդհ. Ժողովոյ Եղբայրութի հայոց Ի Քաղաքիս Արժ. Հայր

Ընտրողական պատկառելի ժողովոյդ նոյն. 24/6 Դեկտ. 99 թու հրտարարիր ստացայ, յորմէ յառաջ ստացած էի արդէն անոր մի նախորդը Հոկտ. 25/6 նոյն. 99 թուականու գրեալ: Հայր նախագահ, նախ քան պատասխանելու

այդ հրտարարիրուն՝ որոյմով ըստ սանձանգրութեան, իբր ազգային անհատ կոչում կ'ընէիք եւ կը հրտարէիք զիս Ընդհ. Ժողովոյն Գաղտնաւոր անդամոց ընտրութեանը. պարս կը համարիմ մի փոքր տեսութեամբ Ձեր ուշադրութիւնը հրաւիրել եղբայրութիւն մէջ ի վաղուց անտի ընդունուած այն սովորութեանց վրայ, որոց եւ ինքս հետեւած եմ աւելի կրկար տարիներէ ի վեր:

Արդ՝ Ձեր առաջին հրտարարին մէջ, երբ ընտրութիւնը ըստ Սահմանադրութեան ըսելով կը մերթէիք, անհրաժեշտ է լուս չ'մնայ թէ, Սահմանադրութեան գոյութենէն ի վեր քանի՛ Առաջնորդ, քանի՛ Տեղապար, քանի՛ քննիչ եւ քանի՛ պատուիրակ կարգուած է եղբայրութիւնը Հայ այս ժողովրդեան համար, եւ թէ աւելի անձուկ այն աւուրց մէջ ի՞նչ հետեւողութեամբ ի գործ դրուած է Ձեր ճանչցած կամ դիտցած Սահմանադրութիւնը: Յեղիկոպոս Առաջնորդ, Յ Տեղապար, մէկ քննիչ եւ մէկ պատուիրակ տեսած ու անոնց բոլոր գործառնութեանց եւ ինքս վկայ, չէ՛ կարելի անտեսել այժմեայ Ձեր ընտրութեան այս եղանակը, որ բոլորովին հակառակ է Սահմանադրութեան ոգւոյն:

Եւ ինքս չեմ կրնար ըմբռնել թէ ի՞նչ ըսել է Ազգ. տուրք վճարողներուն միայն ընտրողական իրաւունք տալ եւ բաց աստի ո՛չ միայն չ'վճարողները այդ իրաւունքէն զրկել, այլեւ Գահիրէի այժմեայ 1500 թ տնւոր բնակչէն միմիայն 60 թ չափ ընտրող կամ ընտրելի ի ձեռին ունենալ ու այդ փոքրութիւն քանակութեան ոչ մի պատճառներուն վրայ ալ ընտր չ'մտածել:

Երբ անցեալ հին տարիներ մէջ բերի, պատճառն այն է որ այն ատեն 2—300 տնւոր միայն կային Գահիրէի մէջ, սակայն եւ այնպէս նոյն իսկ 4. Պոլսէն կարգեալ Առաջնորդներ, Տեղապարներ այս նորաձեւ եղանակը չ'գործարեցին, ուրեմն Գահիրէի այժմեայ 1500 թ չափ հայ տնւոր բնակիչը ինչո՞ւ պիտի զրկուին ընտրողական իրաւունքէն:

Ըսած այն տոններս պէտք է գիտնալ որ Ազգ. բոլոր կալուածները պարտոց փոխան դաւուած եւ գատարի մտուկը կը տքար պարտուի բեռն տակ. եւ դարձեալ անհրաժեշտ կերպով Ազգ. տուրք ստանալու ընտրուած եղանակը ոչ ոք յերեւան բերաւ ու գործարեց. այժմ ի՞նչ է պատճառը երբ Ազգ. գանձարանը սեւէ պարսք չուրի եւ ոչ ալ ժողովուրդը պատճառ մը, ստիպողաբար Ազգ. տուրք կրելու ի՞նչ միթէ սուրբ աղաղակելով կը կարծուի թէ ժողովրդին ձայնը կարելի կը լինի խափանել ու անոր իրաւունքները բռնաբարել:

Ահա ես ի լուր ամենուն կը յայտարարեմ թէ Ազգ. սաքք ըսածնիդ վճարեցի. ի՞նչ պիտի պատասխանէ Ազգ. իշխանութիւնը իմ բոլոր ըսածներուս Ուրիշ առիթներու մէջ ուրիշներու համար շատ մը պատճառներ կ'ստեղծուէին, ինձ համար ի՞նչ պիտի կրնայ ըսուիլ. տարիքս 52, 21 տարիէ ի վեր ամուսնացեալ, Յ 3 տարիէ ի վեր հոս ի Գահիրէ հաստատեալ, գործի տէր, պատուաւոր ու 1876 թուականին յայս կառավարութեան տուրքերու գանձման կայնի համար, ժամանակ մը Ազգապետ:

Տ. Յոլանդացի Միկելանի օրով՝ որ 4. Պոլսոյ կրօնական ժողովին եղբայրութիւնը գործոց քննիչը կարգուեցաւ. երեսփ. Ժողովոյն Ա. քունչ շահող Տեղապար Տ. Սահակի օրով Քաղաքական Ժողովոյ Ատենապետը, Ձինուր պէյի օրով թաղ. խորհրդոյն Ա. անգամ սքեղծիչը եւ միանգամայն եկեղեցական բոլոր պիտոյիցը լիազօր տեսուչը անուսնուած եմ:

Հեւեաբար ի՞նչ պատճառարանութեամբ եւ օրինական եղանակաւ կարելի է գտնացում տալ ինծի, որ Ազգ. իշխանութեան գործած այս անուշոք զրկումին ու Պատկառելի ընտրողական ժողովրդի հետեւած միայնի գէմ բուռն կերպով կը բողբաքեմ: Եթէ Ազգ. վարչութիւնը կ'ընդունի Սահմանադրութիւնը, միթէ Ազգ. տուրք վճարողները միայն Ազգ. անհատներ պիտի ճանչցուին. ու եթէ այդպէս պիտի ըլլայ, միւսները ո՞ր եկեղեցոյն պիտի տանիր եւ կամ անոնցմէ ուրիշ սեւէ Ազգային կամ եկեղեցական տուրքը չ'պիտի պահանջուի:

Ինչո՞ւ չեն սրբազրուիր Ազգ. իշխանութեան զեկավար պաշտօնէութեան այն անդամները, որոց

պաշտօնը ըստ Սահմանադրութեան հրքէք ներկի չէ. ուրեմն ինչ է կացութիւննս, սահմանադրական թէ հակասահմանադրական, որը ընտրողական իրաւանց համար չէք յայտարարեր, ուրեմն ինչո՞ւ պիտի գրկուին Գահիրէի այնքան հարիւրով, հազարով ժողովուրդը իւր ընտրողական իրաւունքն:

Յայտնի ճշմարտութիւններ, արդար իրաւաբանութիւններ են այս տեսութիւնները որք ուղղակի ոտից կոխան ըլլալով մեր Ազգը իւր փառքէն ու բարձրութենէն կը նսեմանայ ու այսպէսով Ազգ եւ ազգութիւն տխուր ու ցաւալի կացութեան մշտնջենապէս կը մատնուի, որուն գէժ այժմէն իբր միակ Ազգ. անհատը զօրեղ ձայնով բողոքելով օրինաւոր չպիտի ճանչնամ ընտրողական պատկ. ժողովոյց այն քուէարկութիւնը, որ կը ծանուցանէիք թէ կիրակէ Դեկտ. 10, 99ին տեղի պիտի ունենայ:

Եւ այժմէն յայտարարելով որ տեղական հայ թերթով ալ հայ ժողովրդեան դատողութեանցը պիտի ենթարկեմ իմ յայտնած այս բողոքին իսկութիւնը, ներկայիս կը խնդրեմ որ պարտ ու պատշաճ շքրջահայեցութիւնն հաճիք ունենալ յանձին Ձեր արդարադատութեանը գէթ, որուն վստահացած կը սիրեմ յոռալ օգտակար ու արժանաւոր լուծում մը, տիրող դժգոհութեանց հանդէպ, այս առթիւ խնդրելով որ ընդունիք յարգանքներս:

Մնամ եւ այլն  
Ս. ՊԻԻԼՊԻԻԵԱՆ

« Արմէնիա » ի 29 Նոյ. 33 րդ թուոյն մէջ հետեւեալը կը կարդանք.

« Տէր Եզնիկ Եպիսկոպոս Ապահունի փոզոցին մէջ սահած ինկած լինելով, ոտքը գէշ կը կրկնուի զարձեր վնասուեր է: Բժիշկները կը խնամեն այժմ՝ զինքն եւ կը կարծուի թէ հազիւ ամսի մը չափ յետոյ կրնայ ելլել անկողնէն:

— Կ. Պօլսոյ Մաղիկ թերթը Նորին Գերապատուութեան պատահած այս արկածին մանրամասնութիւններն ընելէ վերջ, կը յաւելուի թէ Ազգ. Պատրիարքարանի կողմէ մասնաւոր բժիշկ մը նշանակուած է Ապահունին խնամելու համար:

Նորին Գերապատուութեան արդի նիւթական վիճակն ալ ֆիզիքականին նման հիւանդ ըլլալը գիտնալով, Գահիրէի իրեն համակիրներէն ոմանք՝ իրենց կարողութեան ներքեւ չափով փոքրիկ գումարներ տրամադրած են խմբագրութեանս, Նորին Գերապատուութեան դրկուելու առաջարկութեամբ:

Նուիրատուաց այս ցուցակը հրատարակելէ յառաջ հրաւեր կուղղենք ամեն անոնց, որոնք կը ցանկան Նորին Գերապատուութեան արդի հիւանդագին օրերը ամուքել, որպէս զի այս առիթը չ'փախցնեն:

« Լ. Առմէնի » ի յարգելի խմբագիրը Տիար Մ. Չերապ, իր նոյնմբեր ամսաթիւթերէն մէջ կը գրէ թէ, Սըվազէն ստացուած նամակի մը համաձայն թուրքերէ բաղկացած խումբեր հայոց խանութները եւ տունները կողպտած, խաչարարած եւ կոտորածի սպառնալիքներ ըրած են:

Կիրակի օրը տեղի ունեցաւ Լսարան-Ընթերցաստան ընկերութեան առաջին լրարանը:

Համաձայն ծանուցման Գիւղարանութեան վրայ տեղի չ'ունեցաւ սակայն ատենախօսութիւնը, Կ. Պատպանանի տիարութեան պատճառաւ եւ անոր տեղ խօսեցան Տիարք Մ. Հայկունի «Յարատւ եւ աշխատութեան» եւ Ս. Բիրասա «Կարանի կարեւորութեան» վրայ:

Ընդհանուր տպաւորութիւնը լաւ եւ ձեռնարկին սկզբաւորութիւնը խնդակցութեան արժանի է:

Ա.Ձ.Գ.

« Արշալոյս » ի անցեալ թուով հրատարակուած մեր պաշտօնական ծանուցման համաձայն, Որբասիրաց ընկերութեան Ընդհ. ժողովոյ գումարումը տեղի պիտի ունենայ վաղը՝ կիրակի 10 դեկտ. Ապու Խալիլի թատրոնին մէջ, յետ միջօրէի ժամը 2ին:

Ընկերութեան ընդհատուած գործաւնութիւնը կանոնաւորութեան շաղի մէջ գնելու ջերմ փափաքով՝ կը յանձնարարենք մեր բոլոր սրբասէր ընկերներուն, որ այս կարեւոր նստին ներկայ ըլլալու փութաշանութիւնն ունենան:

Մասնաւոր հրաւիրագրեր չ'պիտի զըրկուին:

Հրատարակ առժ. Գործ. ժողովոյ  
Ատենագրւիր Ատենագետ  
ԱՊԱՀ Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ

ԲՈՒՍԱԿԵՐՈՒԹԻՒՆ

Բարիցի « Թան » լրագրոյն անցեալ թիւերէն միոյն մէջ հետեւեալը կը կարդանք բուսակերութեան վրայ, որ գիտական եւ տնտեսական աշխարհին ուշը կը գրաւէ հետզհետէ:

Մի քանի տարիներէ ի վեր Անգղիացիք շատ կ'զբաղին՝ ոչ առանց պատճառի, մանրական բարկութեան մը խնդրով: Մեր օրերու մէջ ալ սովորած անձանց առ ՚ի չգոյէ բաւականաչափ սքոնուղի մուտոյ մանկանց գոյութիւնը ամօթ մ'է մարդկութեան համար: Բնութիւնը մեզի կը ներկայէ այնչափ հրաշալի եւ բազմատեսակ միջոցներ որ վերոյիշեալ մասերը միմիայն գործնական տրգիտութեան մը եւ անտեսագիտութեան զայրացողցի մի անկարողութեան վերագրուէ: Եթէ մարդ միայն հողէն, ջուրէն եւ օդէն քաղէր — բան մը որ հնար է եւ դիւրին — սննդական արտադրութեանց կէտը, պաշարը ո՛չ միայն բաւական, այլ բերապատիկ աւելի պիտի ըլլար: Նոյն իսկ իրերու ներկայ վիճակին մէջ, երկրագործութեան, վաճառականութեան եւ արուեստից արդի պայմաններուն մէջ անմխտելի է որ լաւագոյն օգուտ մը կրնար քաղել պատրաստ միջոցներէն, եւ սովորածութիւնը շատոնց ՚ի վեր արտաքսած կ'ըլլար երկրագործի վրայէն:

Անշուշտ շատեր ըրած են այս խորհրդածութիւնները, որոնք գերազանցօրէն գործնական եւ գնանազան հանգամանքներ ստնելու վրայ են մեր անդր-Մասնաշաղկապ գրառներուն քով: Արդէն մեր ընթերցողաց ուշագրութիւնը հրաւիրած է ինք ժողովրդային խոհանոցներու վրայ, որոնք հետզհետէ կը շատնան Անգղիոյ մեծ քաղաքներուն մէջ՝ տարածելով իրենց գաղափարները:

ՍագիաՄուրիէն եւ Պիւթագորէն ՚ի վեր գուտ բոյսերով մտուցման առաւելութիւնները քարոզող փիլիսոփայներ չեն պակաս: Բայց, եթէ այս վարդապետութիւնը ՚ի վաղուց հետէ բազմաթիւ կողմնակիցներ ունեցած է Հարաւային Ասիոյ մէջ՝ եւ թէև անպիտակ, գրեթէ նոյնքան կողմնակիցներ բոլոր լեռնոս եւ աղքատ երկիրներու մէջ, եւրոպական մեծ քաղաքներու մէջ շատ աշակերտներ ունեցած չ'էր մինչեւ այս վերջին ժամանակները: Հիմա ինչպիսի բարի կերպարանքով կստանայ: Ենթադրեալ բուսակերաց ընկերակցութիւնը, որ քառասուն տարիէ ՚ի վեր հիմնուած է Մանչեսթրի մէջ, կարեւոր դեր մը զբաւելու վրայ է: Հազարներով համախոհներ ունի, մեծաքանակ դրամա-

վրի մը տէր է, բարգաւաճ թերթ մը կը հրատարակէ, գաղափարածաւալ բերաւոր տնտեսներ, գրքոյկներ կը ցրուէ, տարեկան համաժողովներ կ'ունենայ, Լօնտոնի, Լիվըրբուլի, Պէրմընկէմի, Կլասքոյի մէջ մասնաւոր ճիւղեր կը բանայ: Մէկ խօսքով այլ եւս կարելի չէ անգիտանալ այդ ընկերակցութեան գոյութիւնը:

Սովորութիւնը՝ մասնաւոր մանրական խնդրոց մէջ՝ այնքան զօրաւոր է որ մարդ առջի բերան պարզապէս զուարճալի եւ ծաղրելի կը գտնէ, ինքզինքը բուսային սեղանի մը ենթարկելու գաղափարը, երբ աակաւին երկրիս վրայ կը գտնուին ոտորէներ, ձուկեր, կաղաւներ, եւ նոյն իսկ ուսկական փեղկաքիտներու ապարակին մէջ կը նստէ այդ գաղափարը: Եւ սակայն նոյն իսկ վերի վերջ քննելով զայն կը տեսնենք որ այնքան արհամարհելի չէ:

Ո՞վ երբէք նողկանք չէ զգացած արիւնոտ հաւու մը, կամ մորթագիւրծ նապաստակի մը հոտէն, սպանդանոց մը եւ կամ պարզապէս մտաբարձ կառք մը տեսնելով: Ինչպիսիքն ինչպիսիք, միտք ոչ այլ ինչ է բայց եթէ դիտել եւ դիտել ինքնին ամենապարզելի բան մ'է՝ հոտաւորութեան, տեսողութեան, ամեն զգայարանաց: Ենթադրենք որ միտք քայքայեալ մտայնութեան մէջ կը գտնուինք եւ միայն կաթնեղէնով եւ բուսեղէնով ապրած ըլլանք մինչեւ մեր յստակերտը տարին, եւ այն ատեն մեզի առաջարկուի պատառ մ'առնել այն անանուն, զաղիք եւ դարչնաոտ բանէն, զոր կը ներկայացնէ մուտած անասուն մը, նողկանք պիտի զգայինք անտարակոյս: Ահա բուսակերներն ալ ճշգրտապէս կը սնուին որ անանոց միտք ուսել այնքան անօգուտ, այնքան փեսաակար, այնքան վտանգաւոր, այնքան սուղ է, որքան այդ միտք արհեստական եւ նողկալի է: Կը հաստատեն որ բառին բուն նշանակութեամբ՝ վաթար սովորութիւն մ'է, որմէ պէտք է ազատել մարդկութիւնը եւ մեր ցեղին նախկին բնական սնունդին՝ բուսակերութեան վերադառնալ:

Փաստերով ալ կարելի է ապացուցանել այս տեսութիւնը: Նախ եւ առաջ անմխտելի է որ կենդանական հիւսկէնները վերակազմելու յատկացեալ տարրերը բոյսերէն կ'առնենք, եթէ այս առումը տեղի ունենայ սովորակի, կամ ուսելի անասնոց միջոցաւ, արդիւնքը միեւնոյն է՝ տարալուծօրէն:

Միւս կողմէն ստոյգ է որ շատ մը հիւանդութիւններ յառաջ կուգան թունաւորութեան մը, զոր կը պարտինք միտքու յոտութեան վերջապէս մտով կերակրուելու համար մեր ըրած հանապազօրեայ ջանքերուն գաղափարը միայն զգուշի է բաց է ի բաց, եթէ անհրաժեշտ պէտքով մը չ'արգարանայ:

Այս սկզբանց վրայ հիմնուելով՝ բուսակերք խնդրոյն տարրալուծական (chimique), բնախօսական, անտեսական կամ ընկերական կողմերը ուսումնասիրեցին եւ այն եզրակացութեան հասան թէ մասկերութիւնը չարիք մ'է եւ ճշմարիտ հերետիկոսութիւն մը ամէն պարագայի մէջ:

Ինչո՞ւ միտք ուստելու է, կ'ըսէ գրքոյկ մը որ 90րդ տպագրութեան հասած է: Միտք ուստելեաց ամենին սուղը, ամենին վտանգաւորը, ամենին գարշելին է: Ալիւրաւորներով, մրդեղէնով, խոտեղէնով, հաւկիթով եւ կաթով սնանիլ համամատարար նուազ սուղ, աւելի ախորժարար եւ աւելի համեղ է: Ասոնց մէջ կը գտնենք բնասպիւր (albumin), նշալը, շաքարը, իւղը եւ վերջապէս այն ամեն նիւթերը, որոնք հարկաւոր են կենդանական տարրերու վերակազմութեան: Միտք միայնակ անբաւական է մեզ զօրացնելու, վստայի նշալ չունի. հետեւաբար հարկ է այդ պակասը լեցնել ալիւրաւորներու, հացի, գետնախնձորի եւ այլնի միջոցաւ: Ասկէ զատ, մահ մէջ չկայ սնուցիչ տարր մը զոր չ'կարողանանք դիւրութեամբ եւ աւելի բնական կերպով առնել ուղղակի բոյսերէն: Կարելի է եւ պէտք է բուսակերութիւնը յարմարցնել անհատական կացութեան, ըզրդային եւ դնդիրային յոգնութեանց, կլիմայի եւ իւրաքանչիւր անհատի ճիւղութեան. բայց՝ ինչ որ ալ ըլլայ՝ միշտ բաւական է եւ յաւիտեան նախադասելի մասկերութեան:

(Շարունակելի) 9.

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1899

Ա. Թիւ	1196	շահած է	Ֆրանք	1000
Բ. "	7589	"	"	200
Գ. "	9859	"	"	400
Դ. "	4504	"	"	50
Ե. "	439	"	"	50

Հետեւեալը 25 ազան ֆրանք կը շահին

5051	6555	5903	3887	7920	4300
3626	8044	8731	7238	1787	7138
4432	3374	8315	251	211	7193
	265	8243	3207	3975	

ՄԱՆՈԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան անուկին անվաւ կանոթիւնը կը լինին:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԵՐ  
ՉԱՓԱՅԱՍՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՀԱՅ ԱԻԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ  
Ի ՏԱՂՈՒՑԻՅԷ

Դասաւանդութիւնը սկսած են նոյեմբ. ամսոյ 6 էն սկսեալ՝ երեկոյնները ժամը 7 էն մինչև 9 1/2 և կ'աւանդուին Անգլ. Գաղղ. Արաբերէն և Հայերէն դասեր:

ՎԿԱՅԵԱԼ ԱՂՔՅՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ ԶՐԻՖԷՆ

Դիմել առ Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ Հիմնադիր-Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԴ

Ամենափափակ ստամոքս ունեցողներուն համար.

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ  
ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Օռօգի Պաֆ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պեմպի ցիւց գիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջաբերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փութին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխառն գալիս այլուրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փութին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջապէս ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաթներ և այլն:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՃՕՆՕԿՐԱԾ

Գ.Ա.ՆԻՐԷ, — Մուսի փողոց. — Գ.Ա.ՆԻՐԷ  
Ս. և Ս. Սեմավիի վաճառատան գիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնօղի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աքամակազարդ, ոսկի, արծաթ եւ ցիֆի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանայ ամենաբնորոք տեսակներէն զարդեղէններ, օղբեր, մասալիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

38-50

ՏՕՐՔՐՈՐ ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԵԱՐՈՅԺ  
Ապիսն, Շարէ Գուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղաներ:

Կը դադարեցնէ վայրկեանապէս աղուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած աղաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

4 7-10

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայեալ ճեղական կառավարութիւնն եւ բժշկական վարժարանն:

Իւր ընտելութիւնը հաստատած է ի Շարա Ապա-իւ-Ալիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարևոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի մնան:

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ  
Ի Գ.Ա.ՆԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմարներ, Ընկերութեանց եւ փաճառակաւներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ կ'ըզած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտագրութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզրպատի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

ԱՍՏԻԿ ԷՍՄԵՐԵԱՆ

Կ. ՊՕԼՍՈՅ

ՀԱՅ ԲԻԻՐԲՃԻ ԱՐՇԵՍԱԻՈՐՆԵՐԷՆ ԱՌԱՋԵԱԿԱՐԳԸ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԱԼԻ

ՊԱ.Պ.ԷԼ.ԽԱԼԻ

Ամեն տեսակ հին և նոր մուշտակները եւրոպական և թուրքական ճաշակով ձեւի կը բերէ և նորի կը վերածէ:

Իրեն գիմող յարգելի յաճախորդները պատրաստ պիտի գտնեն նաև մուշտակ օձիքներ և շն:

Անոնք որ իրենց հինցած մուշտակները տանը մէկ անկիւնը նետելով ցեցերու կեր կ'ընեն, կ'ընան այս առիթէն օգտուիլ:

8-8

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բաստրպ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:

Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տազ) գլուխները մաղ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած և հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 10 զրշող (2 1/2 ֆրանք):

Վերոյիշեալ շուրջն կը գտնուի նաև Աղէք-ասնդրիա Միքըէ-Կէսիւտ մանրավաճառ Պ. Լեոն Ասլանեանի մօտ:

Ակուայի փողի և շուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տախա առ տախա թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակադրոյցները:

4 2-8